ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1337-21.04.2026-ԳԿ-011/1), «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1337[1]-21.04.2026-ԳԿ-011/1), «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1337[2]-21.04.2026-ԳԿ-011/1), «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1337[3]-21.04.2026-ԳԿ-011/1), «ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1337[4]-21.04.2026-ԳԿ-011/1), և «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1337[5]-21.04.2026-ԳԿ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի այսուհետև՝ (Նախագծի) Հոդված 5,	1) Օրենքի Հոդված 11, մաս 2 Շարադրել հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզավորումն իրականացնում է Կառավարության ստեղծած բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման մասնագիտացված կառույցի (այսուհետ՝ Մասնագիտացված կառույց) լիցենզավորող հանձնաժողովը՝ համաձայն «Լիցենզավորման մասին»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			օրենքին, սույն օրենքի և սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ մասով նախատեսված Կառավարության որոշումով սահմանված կարգի, պայմանների և այլ նորմատիվ իրավական ակտերի: Մասնագիտացված կառույցի լիցենզավորող հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ՄՈՒՀ-ին տրամադրում է համապատասխան իրավունք և լիցենզիա: 2) լրացնել 2.1 մաս հետևյալ բովանդակությամբ. «2.1 Սույն հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով նախատեսված փաստաթղթերի ուսումնասիրության և մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով Մասնագիտացված կառույցը կարող է Լիազոր մարմնին առաջարկել ձևավորել մասնագիտական հանձնաժողովներ՝ համաձայն լիցենզավորման կարգով սահմանված ընթացակարգի:»		
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Լրացնել նոր հոդված 6, Նախկինը համարակալել հոդված 8-րդ	Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածում լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «3. Մասնագիտական կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզիան ստանալուց հետո ՄՈՒՀ-ը համարվում է նախահավատարմագրված մինչև սույն	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված ՄՈՒՀ-երի հավատարմագրման կարգով, չափանիշներով և հավատարմագրման գործողության ժամկետով ՄՈՒՀ-ի հավատարմագրումը: Նախահավատարմագրումը հավատարմագրված լինելուն համարժեք ժամանակավոր կարգավիճակ է, որի ընթացքում ՄՈՒՀ-ը կարող է իրականացնել սույն օրենքով սահմանված իր գործառույթները:»,		
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Լրացնել նոր հոդված 7,	Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի 17-րդ կետ կետը ուժը կորցրած ճանաչել:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Լրացնել նոր հոդված 9 Նախկին հոդված 7-ը համարակելել 10	Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածում լրացնել 14.1 և 14.2 մասեր հետևյալ բովանդակությամբ. «14.1 Մասնագիտական կրթության դիպլոմ է համարվում միայն հավատարմագրված կամ նախահավատարմագրված կրթական ծրագրով ուսումնառության դրական արդյունքով սահմանված կարգով շնորհված դիպլոմը կամ սահմանված կարգով այլ պետությունների ճանաչված ՄՈՒՀ-երի դիպլոմը: 14.2 Մասնագիտական կրթության դիպլոմում նշվում է ՄՈՒՀ-ի, ինչպես նաև կրթական ծրագրի հավատարմագրված լինելու փաստը:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

5.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նոր համարակալմամբ հոդված 11, նոր 2-րդ և 3-րդ կետեր Նախագծի 9-րդից 16-րդ հոդվածների համարակալումը համապատասշանաբար փոխել 11-րդից 19-րդ հոդվածներ	2) լրացնել հետևյալ բովանդակութ-յամբ 12.1-րդ կետ. «12.1) հաստատում է ուսումնառությունը դադարեցրած կամ մեկ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխվելու կամ մեկից ավելի կրթական ծրագրով կրթություն ստանալու միջոցով կրթական ծրագրի համապատասխան մակարդակի որակավորման որոշակի փուլ մուտք գործելու և ուսումնառությունը շարունակելու համար ընդունելության կարգ.», 3) Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում՝ 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
6.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նոր 19-րդ հոդոված	35-րդ հոդվածում լրացնել 5.1-ին, 5.2-րդ և 5.3-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ. «5.1. Մինչև Կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի 978-Ն որոշման ընդունումը շնորհված հավատարմագրման վկայականները վավեր են մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը: Մինչև 2030 թվականի հունվարի 1-ը չհավատարմագրվելու կամ հավատարմագրման չդիմելու դեպքում ՄՈՒՀ-երի մասնագիտական կրթական ծրագրերով տրված լիցենզիաները ենթակա են կասեցման: 5.2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը լիցենզիա և հավատարմագրում ունեցող կրթական ծրագրերը, շարունակում են համարվել	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			հավատարմագրված հավատարագրման համար սահմանված ժամկետում: 5.3. Մինչև սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Մասնագիտացված կառույցի ՀՀ կառավարության կողմից ստեղծումը մասնագիտական կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզավորումը իրականացնում է Լիազոր մարմինը:		
7.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 3, 7,8,11,13,	3-րդ հոդվածի 1-ին կետում առաջարկում ենք «1.1-րդ» գրելաձեւը, 7-րդ հոդվածի 2-րդ կետում «7.1-րդ» գրելաձեւը, 4-րդ կետում «9.1-րդ» գրելաձեւը, 8-րդ հոդվածի 1-ին կետում «1.1-րդ» գրելաձեւը, 3-րդ կետում «31.1-րդ» գրելաձեւը, 11-րդ հոդվածի 1-ին կետում «2.1-րդ» գրելաձեւը, 2-րդ կետում «7.1-րդ» գրելաձեւը, 13-րդ հոդվածի 3-րդ կետում «4.1-րդ» գրելաձեւը փոխարինել համապատասխանաբար «1.1-ին», «7.1-ին», «9.1-ին», «1.1-ին», «31.1-ին», «2.1-ին», «7.1-ին», «4.1-ին» գրելաձեւերով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձեւը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
8.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Կրթության մասին» օրենքում փոփոխություն	Հանել «(այսուհետ՝ «Օրենք»)» ձեւակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում օրենքին այլեւս հղում չի կատարվում:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		կատարելու մասին» օրենքի «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերում			
9	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի	վերնագրում նշված «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերն հանել քանի որ նախատեբվում է միայն փոփոխություն կատարել:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
10.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի	**Հոդված 2. Անցումային դրույթ** 1. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար տրված այն	**Ընդունվել է**	Ընդունվել է:

		նախագծի նոր հոդված 2, համապատասխան աբար Հոդված 2-ը համարակալել Հոդված 3.	լիցենզիաները, որոնց համար սույն օրենքով առաջանում են նոր պայմաններ և պահանջներ, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը, ենթակա են վերաձևակերպման մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական հիմնական կրթական ծրագրի և արհեստավորի (կամ կրտսեր մասնագետի) որակավորման ծրագրի, մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրի ու մասնագետի որակավորման ծրագրի իրականացման համար, գործող իրավակարգավորումների շրջանակներում: Սույն մասում նշված ժամկետում չվերաձևակերպված լիցենզիաները համարվում են ուժը կորցրած: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նշված ժամկետում լիցենզիաների վերաձևակերպման դեպքում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում:		